Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Սյունիքի մարզի Սիսիանի հ.2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Գործնական աշխատանքի կազմակերպումը մայրենիի դասերին:

Վերապատրաստող, մենթոր՝ Արմինե Մեծրիցյան

Ուսուցիչ՝ Լիանա Հակոբջանյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _____ 3

Նպատակներ, վարկած, արդիականություն _____ 8

Տարրական դասարաններում «Մայրենի» առարկայից կազմակերպվող գործնական աշխատանքների բովանդակությունը, տեսակներն ու մեթոդները:

Գործնական աշխատանքների բովանդակությունն ու արդյունավետությունը ____ 10

Գործնական աշխատանքների դասակարգումը _____ 13

Ստեղծագործական հետազոտական աշխատանքներ _____ 13

Հետազոտական-նախագծային աշխատանքի կազմակերպում,

իրականացում,վերլուծում և գնահատում _____ 16

Եզրակացություն _____

Գրականության ցանկ _____ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաների զարգացումն
ուղղորդելու կամ սեփական
ունակությունները բացահայտելու
կարողությունների ձևավորումը
ուսուցչի հիմնական խնդիրն է: Այս
խնդիրը ուսուցչին և
աշակերտներին մղում է դառնալու
հետազոտող:
(Հին հունական աֆորիզմ)

Մայրենի լեզվի դասավանդումը յուրահատուկ բնույթ ունի հատկապես տարրական դպրոցում: Մայրենիի դասընթացը ոչ միայն բուն լեզվական, այլև ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոց է: Տարրական կրթության ծրագիրը նպատակաուղղված է կրթության բովանդակության սահմանման մեջ զգալի նշանակություն ունեցող ինքնուրույն գործունեության, կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Գործնական մեթոդ ասելով հասկանում ենք ուսուցման այնպիսի եղանակ, որի հիմքում ընկած են աշակերտի կողմից գործնական աշխատանքների կատարումը և որի շնորհիվ հմտությունները և կարողությունները ամրապնդվում են պրակտիկայի ընթացքում: Գործնական աշխատանքները շատ կարևոր դեր են խաղում ցանկացած դասապրոցեսում, հատկապես՝ մայրենիի դասերին: Դրանք, բացի այն, որ թույլ չեն տալիս դասը վերածել միապաղաղ, ձանձրալի ժամի, նաև նպաստում են տրամաբանական մտածողության զարգացմանը:

Գործնական աշխատանքը նպաստում է, որ աշակերտը կարողանա մտածել կարդացածի շուրջ, առանձնացնել գլխավորը երկրորդականից, կատարել ինքնուրույն եզրահանգումներ: Այսինքն՝ տեսական գիտելիքի գործնական կիրառումն է՝ ստեղծագործական մոտեցմամբ: Գործնական աշխատանքի ճիշտ կազմակերպումը,

անցկացումը <<մայրենի>> առարկայից կարևոր է նաև այն պատճառով, որ այն ձևավորող գնահատման ձևերից մեկն է:

Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը: Որպես մանկավարժական երևույթ՝ գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական առաջադրանք է, այսինքն՝ այն, ինչ պետք է անի աշակերտը, մյուս կողմից՝ այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության դրսևորման ձև, որն արդյունքում աշակերտներին տալիս է միանգամայն նոր, նախկինում նրան անծանոթ գիտելիքներ կամ էլ արդեն ունեցած գիտելիքների խորացում:

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն՝ մայրենիից տրվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

1. պատմության գծապատկերի կազմում
2. բառերի, վանկերի կազմության գծապատկերներ
3. տեքստի սխալների ուղղում, խառնված հերթականության շտկում
4. գործնական գրություններ
5. տեքստի նկարազարդում
6. հեքիաթների հորինում, ինքնաշեն գրքերի նկարազարդում
7. զանազան տեղեկատվական աղբյուրներից որոնել, գտնել տեղեկություններ՝ առաջադրված հարցերին պատասխանելու համար
8. դասարանական թերթ ստեղծելու և ձևավորելու աշխատանքներ և այլն:

Գործնական աշխատանքները նպաստում են խորացնել կրտսեր դպրոցականների գիտելիքները, զարգացնել նրանց ճանանչողական ակտիվությունը: Պատկերավոր ասած՝ մեզ շրջապատող աշխարհը ստեղծագործական լաբորատորիա է, որտեղ ընթանում է ճանաչողական գործընթացը: Աշակերտների գործնական աշխատանքը մայրենիից մի ոլորտ է, որտեղ շաղկապվում են գիտելիքն ու կարողությունը, տեսությունն ու պրակտիկան: (1)





1. «Նախաշավիղ», N4, 2010, «Գործնական աշխատանքները 4-րդ դասարանում»

Գործնական աշխատանքի նպատակը

Գործնական աշխատանքը սովորողին հնարավորություն է տալիս կիրառելու գիտելիքները և հմտությունները, նպաստում է սովորողի ինքնուրույնության ու փորձառության ձևավորմանը:



Առաջադրանք – վերջնարդյունք – կարողունակություն կապը

- Գործնական աշխատանքներ իրականացվում են ուսումնական բոլոր առարկաներից և ուսուցման գործընթացի բոլոր փուլերում՝ պայմանավորված յուրաքանչյուր առարկայի առանձնահատկություններով:
- Գործնական աշխատանքը պետք է համապատասխանի ուսումնական ծրագրով նախատեսված վերջնարդյունքներին, առաջադրանքը՝ նպաստի կարողունակությունների զարգացմանը:

Գործնական աշխատանքի տեսակները

Գործնական աշխատանքի տեսակներից են պաստառի ձևավորումը, ֆիլմի/տեսահոլովակի նկարահանումը, դիտումն ու քննարկումը, երգի միջոցով ուսումնառությունը, դերախաղը, փորձը, քարտեզների ուսումնասիրումը և ստեղծումը, հետազոտական աշխատանքը, նախագիծը, դեպքի ուսումնասիրությունը, էքսկուրսիաները, բանավեճը, սահիկաշարի պատրաստումը և այլն:

Գործնական աշխատանքի անցկացումը

- Գործնական աշխատանքները լինում են անհատական և խմբովային: Դրանք կարող են գնահատվել ինչպես միավորային, այնպես էլ ոչ միավորային ձևերով:

- Գործնական աշխատանքները կատարվում են դասարանում, տանը, համայնքում... Արդյունքները կարող են ներկայացվել բանավոր և գրավոր:

Թեմայի նպատակները.

- Գործնական աշխատանքի միջոցով նպաստել սովորողի սոցիալական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ անհրաժեշտ տեսական ու գործնական նյութերի ճիշտ մատուցմամբ, ինչպես նաև անհատի ինքնադրսևորմանն ու կենսագործունեությանը
- աշակերտներին հնարավորություն տալ ցուցադրել յուրացրածը
- զարգացնել տրամաբանական մտածողություն, դիտողականություն, ուշադրություն, տարածական պատկերացումներ
- ձևավորել յուրացված գիտելիքները ոչ ստանդարտ իրավիճակներում կիրառելու կարողություններ
- ձևավորել սովորել սովորելու հմտություն
- ձևավորել ցանկացած աշխատանք կատարելու նախագծման քայլերի մշակման կարողություն
- նպաստել ինքնուրույնության և փորձառության ձևավորմանը
- զարգացնել ստեղծագործական կարողություններ
- զարգացնել դեպքերի ճիշտ և տրամաբանական հաջորդականությունը, սկիզբ և ավարտ ներկայացնելու կարողություն:

Վարկած.

<<Մայրենի >> առարկայի շրջանակներում գործնական աշխատանքի կազմակերպումը նպաստում է տարրական դասարանների սովորողների ընդհանուր զարգացվածության մակարդակի բարձրացմանը:

Թեմայի արդիականությունը.

Հանրակրթության դերը պայմանավորված է նրա գործակիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Անժխտելի է, որ ճանաչողության հիմքը իրականությունն է: Ուստի աշակերտներին պետք է հականալի դարձնել այն, որ տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման: Աշակերտներին պետք է հասկանալի դարձնել մայրենիի տեսական հասկացությունների իմացության կարևորությունը մարդու պրակտիկ գործունեության մեջ: Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող իրադարձություններում կիրառել կարողանալը: Աշակերտների մեջ նման կարողության առկայությունը նրանց իսկ կրթվածության որակի հիմնական և գլխավոր ցուցանիշն է ողջ կյանքում: Այդ իսկ պատճառով ուսումնական գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս հիմնական շեշտը պետք է դնել աշակերտների մեջ գործնական կարողությունների ձևավորման և զարգացման հարցերի վրա: Հենց այս տեսակետից է, որ արժևորվում է գործնական աշխատանքի դերը՝ ո՛չ միայն որպես տեսական ամրապնդման միջոցի, այլև որպես սովորածը գործնականում կիրառելու հնարավորություն: Այսօր անհրաժեշտություն է առաջանում որոնելու կրթական գործընթացի կազմակերպման համապատասխան միջոցներ և ձևեր, որոնց օգնությամբ կարելի կլինի իրագործել աշակերտների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները: Ստեղծագործական աշխատանքի ձևերից են գործնական աշխատանքները:

Գործնական աշխատանքը սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքների միավորային գնահատման ստուգման տեսակ է: Այն վերաբերում է սովորողների կողմից ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառությանը:

Հիմա փոխվել է վերաբերմունքը կրթության նկատմանբ, հետևաբար փոխվել են նաև կրթությանն առաջադրվող պահանջները: ՀՀ պետական չափորոշչային պահանջների մեծ մասն իրականացնելու ուղիղ ճանապարհը գործնական աշխատանքների կազմակերպումն է, որոնց մեծ տեղ է հատկացվում նոր չափորոշչով:

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ «ՄԱՅՐԵՆԻ» ԱՌԱՐԿԱՅԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐՆՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գործնական աշխատանքների բովանդակությունն ու արդյունավետությունը

Գործնական աշխատանքը ուսումնական գործընթացում յուրացված գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառումն է:

Այսօր անհրաժեշտություն է առաջանում՝ որոնելու կրթական գործընթացի կազմակերպման համապատասխան միջոցներ և ձևեր,որոնց օգնությամբ կարելի կլինի իրագործել աշակերտների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները:

Գործնական աշխատանքների սահմանները շատ ընդարձակ են և իրենց մեջ ներառում են նաև աշակերտների կողմից կատարվող հետազոտական աշխատանքներն ու նախագծային գործունեությունը: Գործնական աշխատանքը անցկացվում է և՛ ստուգման, և՛ ուսուցանող նպատակով: Ժամանակակից դպրոցի խնդիրը ոչ միայն աշակերտների միտքն ու իմացական կարողությունները զարգացնելն է, այլև աշխատանքի նկատմամբ սեր, հարգանք և ձգտում սերմանելը: Այս նպատակին է ուղղված տարրական դասարաններում գործնական աշխատանքների կազմակերպումը, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս իրենց տեսական գիտելիքները գործնականում կիրառել:

Գործնական աշխատանքները նպաստում են սովորողների կիրառական կարողությունների զարգացմանը՝ դրանք հետագայում վերածելով անհրաժեշտ սոցիալական հմտությունների: Հմտություններ, որոնք օգնում են աշակերտին ինքնահաստատվելու և իրեն հասարակության լիարժեք անդամ զգալու:

Դպրոցը պիտի հասնի նրան, որ աշակերտն առօրյա կյանքում կարողանա իրեն լիարժեք դրսևորել և գնահատել ստացած գիտելիքների իրական արժեքը:

Գործնական աշխատանքների միջոցով զարգանում են ձեռքերի մանր մկանները, ուշադրությունը, դիտողականությունը, տարածական պատկերացումները: Ձևավորվում է ստեղծագործական և կառուցողական մտածողություն: Աշակերտները կարողանում են

<<կարդալ>> գծագրերը, կազմել քայլաշարեր, ինքնուրույն լուծել իրենց առջև ծառացած խնդիրները:

Ուսումնառության հենց առաջին օրերից սկսած՝ կարևոր է, որ երեխան դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը: Որպես կանոն՝ ուսման նկատմամբ անտարբեր երեխաները սովորում են շատ ավելի վատ, քան կարող են, իսկ հետաքրքրասեր, հարցասեր երեխաները սովորում են շատ ավելի հեշտ և արագորեն են յուրացնում գիտելիքները:

Սա է պատճառը, որ երեխային գործնական աշխատանք կատարելուն նախապատրաստելը, նրան համապատասխան կարողություններ և հմտություններ ուսուցանելը դասվարի կարևորագույն խնդիրն է: Ուսուցչի աշխատանքը պետք է նպատակաուղղված լինի սովորողների գործնական կարողությունների զարգացմանը:

Աշակերտները գործնական աշխատանքների ժամանակ հնարավորություն են ունենում սեփական ձեռքերով ստեղծել դիդակտիկ նյութեր: Նրանք հաճույքով ու սիրով են օգտագործում այն, ինչն իրենք են պատրաստել: Աշակերտները շոշափելի ձևով զգում և տեսնում են իրենց աշխատանքի արդյունքը, բերկրանք են ապրում դրանից: Այստեղ է, որ ձևավորվում է աշակերտի արժեքային համակարգը, սեր առաջանում դեպի աշխատանքը: Գործնական աշխատանքի առաջադրանքները կարող են լինել ինչպես դասագրքից՝ ծրագրային նյութի սահմաններում, այնպես էլ դպրոցից դուրս՝ տրվող տնային հանձնարարականների տեսքով:

Ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա կոնկրետ նպատակ: Երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց յուրացված գիտելիքները: Յուրաքանչյուրը պետք է իմանա կատարման ընթացքը, յուրացնի ինքնուրույն գործելու ձևերը: Աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին: Գործնական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում: (2)

Գործնական վարժությունները ճանաչողական-հետազոտական և ստեղծագործական գործընթացների սկիզբն են: Գործնական ճանապարհով և փորձի միջոցով ձեռք բերված գիտելիքը երբեք չի մոռացվում:

Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական-կիրառական նշանակությամբ: Այսօր ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ սովորողին սովորեցնել՝ իր ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կարողանա կիրառել կյանքում հանդիպող գործնական խնդիրներ լուծելիս: Գործնական աշխատանքներ կարող են տրվել նաև հանձնարարությունների ձևով:

Տարրական դասարաններում այդ աշխատանքները կարելի է կատարել դասի տարբեր փուլերում: Դրանք հաջող կատարելու համար դասարանում անհրաժեշտ է ստեղծել համագործակցության մթնոլորտ: Այն, ինչը որպես անհատական աշխատանք բարդ է, որպես խմբային աշխատանք հաղթահարելի է:

Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է

* նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ, որպեսզի նրանք ոչ միայն իմանան տեսական այն նյութը, որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներին:
* ապահովի աշակերտներին գործնական աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով:
* վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքում:
* վերլուծի և գնահատի կատարված աշխատանքը:

2.Ա. Թորոսյան, Կ. Ռ. Չիբուխչյան, «Գործնական աշխատանքներ մայրենիից», Տարրական դասարաններ, «Զանգակ-2017»

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

●ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ_ Սովորողին ծանոթ իրավիճակում գիտելիքների վերարտադրում՝ ըստ օրինակի:

●ՄԱՍԱՄԲ ՈՐՈՆՈՂԱԿԱՆ_ Գիտիլիքների և հմտությունների կիրառում սովորողին անծանոթ կամ փոփոխված պայմաններում:

●ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ- Խնդրի վերաբերյալ սովորողի կողմից ինքնուրույն լուծման առաջադրում:

●Առաջադրանք - վերջնարդյունք- կարողություն կապը:

Ստեղծագործական - հետազոտական աշխատանքներ

Մայրենիից տրվող գործնական աշխատանքները կարելի է անվանել ստեղծագործական-հետազոտական աշխատանքներ: Հետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում երեխան սովորում է դիտարկել, խորհել, համեմատել, պատասխանել հարցերին, կատարել եզրահանգումներ և այլն: Հետազոտական գործունեությունն ունի իր առանձնահատկությունները.

●այն նպատակաուղղված է իրենց հետաքրքրող գիտելիքների յուրացմանը,

●օգնում է յուրացնել այն կարողությունները, որոնք անհրաժեշտ են ամբողջ

Կյանքում,

●զարգացնում է հաղորդակցական կարողությունները,

●ընթանում է ուսուցչի և սովորողի ստեղծագործական համագործակցությամբ:

Հետազոտական աշխատանքի նախապատրաստման քայլաշարը.

1. թեմայի, տիպի, տեսակի որոշում,

2.երեխաների հետ միասին նպատակի, խնդիրների ընտրություն,

3. ուսումնական միջոցների ընտրություն.

4. հետազոտական աշխատանք՝ ուսումնական միջոցների օգտագործմամբ,

5. տարբեր ձևերով արդյունքների ամփոփում:

Տարրական դասարաններում հետազոտական աշխատանքները կրում են կոլեկտիվ բնույթ, թեմատիկան որոշում է ուսուցիչը, բայց յուրաքանչյուր աշակերտ իր գործն է կատարում ընդհանուրի մեջ: Այն սովորեցնում է երեխաներին աշխատել կոլեկտիվում, ընդհանուր հետաքրքրությունները վեր դասել սեփականից: 4-րդ դասարանում շատ աշակերտներ կարող են ինքնուրույն ընտրել հետազոտության թեման: Ուսուցիչը պետք է միայն ուղղորդի նրանց ճիշտ ընտրության հարցում՝ առաջարկելով մտածել հետևյալ հարցերի շուրջ.

- Ի՞նչն է ինձ հետաքրքրում ամենից շատ:
- Ինչո՞վ եմ ես ուզում զբաղվել առաջին հերթին:
- Ինչո՞վ եմ ես զբաղվում ազատ ժամերին:
- Ինչի՞ մասին կուզենայի իմանալ:
- Ինչո՞վ կարող եմ ես հպարտանալ և այլն:

Հետազոտական աշխատանքները դասակարգվում են՝

- ըստ աշակերտների քանակի՝ անհատական, զույգով, խմբային:
- ըստ անցկացման վայրի՝ դասարանական ,արտադասարանական:
- ըստ ժամանակի՝ երկարատև, կարճատև:
- ըստ թեմայի՝ առարկայական և ազատ:
- Ըստ արդյունքների ներկայացման՝ բանավոր և գրավոր:

Գործնական աշխատանքը կարող է գնահատվել ինչպես միավորային, այնպես էլ.ոչ միավորային ձևերով:(3)

Հետազոտական կարողությունների ձևավորման և զարգացման նպատակով կիրառվում է նախագծերի մեթոդը կամ նախագծային աշխատանքը: Սրա էությունն այն է, որ երեխաները ուսուցչի հետ միասին, իրենց հետաքրքրություններից ելնելով, իրականացնում են նախագիծ՝ լուծելով որևէ հետազոտական խնդիր:

Նախագծերի թեման ընտրելիս պետք է հաշվի առնել հետևյալը. այն պետք է հետաքրքրի սովորողներին, լինի մատչելի, աշխատանքի բովանդակությունը պետք է օգտակար լինի թե' մասնակիցներին, թե' ունկնդիրներին, կրի ճանաչողական բնույթ, պետք է հաշվի առնել տեղեկատվության աղբյուրները:

Աշակերտը նախագծային գործունեության շուրջ աշխատում է հետևյալ փուլերով.

1. Նախագծի թեմայի ընտրություն ,

2. Նպատակի առաջադրում.<< Ինչո՞ւ եմ ես դա անում>>,

3. Վարկածի առաջ քաշում. << Ինչպիսի՞ն կլինի արդյունքը>>,

4. Մեթոդի ընտրություն. <<Ի՞նչ անել, որպեսզի ստանալ այդ արդյունքը>>,

5. Տվյալների հավաքագրում,

6. Արդյունքի ստացում,

7. Արդյունքի վերլուծություն,

8. Եզրահանգումների կատարում,

9. Արդյունքի ներկայացում, գնահատում:

Այս մեթոդի շրջանակներում փոխվում է ուսուցչի դերը. պատրաստի գիտելիքի կրողից նա վերափոխում է ճանաչողական գործունեության կազմակերպչի: Նա օգնում է անհրաժեշտ տեղեկատվական աղբյուրների որոնման հարցում, ինքն է հանդիսանում աղբյուր, համակարգում է ողջ գործընթացը, խրախուսում է և այլն:

Հետազոտական-նախագծային աշխատանքի կազմակերպում, իրականացում, վերլուծում

Ներկայացնեմ հետազոտական- նախագծային աշխատանք իմ փորձից.

Առարկան՝ մայրենի

Դասարան՝ 4-րդ

Տեսակը՝ համակցված, ամրապնդման, ուսուցողական, տեղեկատվական, ճանաչողական:

Թեման՝ Հորինել հեքիաթ, նկարագարդել և բոլոր աշխատանքներով կազմել գիրք:

Մեթոդները՝ << Զրույց >>, << Մտագրոհ >>, <<Հարց ու պատասխան>> , <<Նպատակադրում>> , <<Շրջագայություն պատկերասրահում>> , <<Հեքիաթի քարտեզ>>, << Բազմանիստ >>:

Նպատակը.

Աշակերտների մեջ՝

- կձևավորվի ցանկացած աշխատանք կատարելու նախագծման քայլերի մշակման կարողություն,
- կզարգանան ստեղծագործական ունակությունները, երևակայությունը, դեպքերի ճիշտ և տրամաբանական հաջորդականությունը, սկիզբ և ավարտ ներկայացնելու, գեղեցիկ խոսք կառուցելու կարողությունները,
- կզարգանա սեփական կարծիքն արտահայտելու, ուրիշի կարծիքը լսելու կարողություն,
- կձևավորի ճիշտը սխալից, լավը վատից տարբերելու, հերոսների վարքագիծը գնահատելու կարողություն,
- կմեկնաբանի արժեքային համակարգին առնչվող հարցեր,
- կզարգացնի գեղարվեստական ճաշակը, գունային զգացողությունը,

զգացմունքները գույների միջոցով թղթին հանձնելու կարողությունները,

- կզարգացնի աշակերտների ուշադրությունը, դիտողականությունը, տարածական պատկերացումները, կհարստացնի բառապաշարը

- կամրապնդի ճանաչողական որակների դրսևորումը և այլն:

Վերջնարդյունքները.

- Կկարողանա հորինել հեքիաթ՝ արտահայտելով սեփական մտքերը, հույզերն ու զգացմունքները:

- Ձեռք կբերի իրականության հանդեպ փաստերն ու երևույթները ճիշտ ընկալելու և իր վերաբերմունքն արտահայտելու կարողություն:

- Կամփոփի ժողովրդական բանահյուսության նմուշներից հեքիաթի մասին ունեցած գիտելիքները:

- Գնահատելով բարին, գեղեցիկն ու մարդկայինը՝ կկառուցի իր հեքիաթը:

- Գրագետ խոսքով կներկայացնի հեքիաթը՝ շեշտադրելով հեքիաթի բարոյախրատական իմաստը:

- Կկարողանա բազմազան գունային նրբերանգներ օգտագործելով՝ նկարազարդել հեքիաթը՝ կատարելագործելով կոմպոզիցիոն կարողությունները:

Ընդհանրական խաչվող հասկացությունները.

Պատճառ և հետևանք, օրինաչափություն

Կապը ՀՊՉ տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ.

S1, S8, S9, S15, S22, S23, S30

Ընթացքը.

Մտագրոհի, հարց ու պատասխանի միջոցով ծավալել զրույց հեքիաթի մասին՝ երեխաների ունեցած գիտելիքների իմացության, պակերացումների, կարծիքների շուրջ: Որպեսզի երեխաները հստակ պատկերացնեն հեքիաթի կառուցման սխեման, կարելի է կիրառել << հեքիաթի քարտեզ >> մեթոդը՝ գրատախտակին գծելով և մանրամասնելով:

Աշակերտներին ցուցադրել տարբեր հեքիաթների նկարազարդումներ՝ ուշադրությունը կենտրոնացնելով օգտագործված գունային տարբեր երանգների վրա: Ընդհանրացնել, ամփոփել հեքիաթի մասին ունեցած գիտելիքները <<բազմանիստ>> մեթոդով՝ նախապատրաստելով երեխաներին գործնական աշխատանքի կատարմանը:

1. Գործնական աշխատանքի նախագծում.

Քայլ 1. Հորինել փոքրածավալ հեքիաթ:

Քայլ 2. Նկարազարդել հեքիաթը բովանդակությանը համապատասխան:

Քայլ 3. Կազմել հեքիաթների գիրք:

Աշխատանքի կատարման համար տրվում է 1 շաբաթ:

http://www.encyclopedia.am/pages.php?hId=1379

https://www.youtube.com/watch?v=_wdrUJWLkGk

2. Աշխատանքի ներկայացում:

- Յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում է իր հորինած հեքիաթը՝ զուգորդելով նկարազարդման ցուցադրությանը:

- Ներկայացնելուց հետո բոլոր աշխատանքները փակցվում են գրատախտակին:

3. Ուսուցչի կողմից առաջարկվում են մի շարք անվանակարգեր.

- Լավագույն նկարազարդում:

- Ամենախրատական հեքիաթը:

- Հեքիաթը ամենահետաքրքիր ձևով ներկայացնողը:

- Ամենաբարի հերոսը:

- Ամենաչար հերոսը:

Յուրաքանչյուր անվանակարգի համար աշակերտները ընտրություն են կատարում:

Կատարում են նաև ընտրության մեկնաբանում և քննարկում: Արդյունքները հաշվելուց հետո ընտրվում է յուրաքանչյուր անվանակարգում հաղթողը:

4. Աշխատանքների գնահատում՝ ըստ քվեարկության արդյունքների և ուսուցչի կարծիքի:

Հաղթողները խրախուսվում են և ստանում գերազանց գնահատականներ:

Բոլոր աշխատանքներով կազմվում է հեքիաթների գիրք՝ դասարանական անկյունը համալրելու և զարդարելու նպատակով:

Ցանկացած գործնական աշխատանքից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները՝ ապահովելով հետադարձ կապ, որպեսզի աշակերտները հնարավորություն ունենան արժևորելու աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ գործնական աշխատանքը ուսումնական գործընթացում յուրացված գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառումն է:

Տարրական դասարաններում կիրառելով գործնական աշխատանք բաղադրիչը՝ ձևավորում ենք այնպիսի կարողություններ և հմտություններ, որոնք վերառարկայական են և պետք են աշակերտին ողջ կյանքի ընթացքում: Մասնավորապես, սովորողները՝

- զարգացնում են իրենց աշխարհաճանաչողական գիտելիքները,
- ձեռք են բերում սոցիալական հմտություններ,
- իրենց աշխատանքներում դիտարկում են տեսականի և գործնականի կապը,
- ինքնադրսևորվում են, ինքնակազմակերպվում են,
- ուսուցանվող առարկան դառնում է նրանց համար ավելի հետաքրքիր,
- լինում են մոտիվացված,,քանի որ ամեն ինչ անում են իրենց նախասիրությունների շրջանակում և ներգրավված են համընդհանուր ուսումնական գործունեության մեջ:

Կրտսեր դպրոցականներին մայրենիից տրվող գործնական աշխատանքները կարելի է անվանել ստեղծագործական–հետազոտական աշխատանքներ: Անժխտելի է, որ ճանաչողության հիմքը պրակտիկան է: Ուստի աշակերտներին պետք է հասկանալի դարձնել այն, որ տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման: Պետք է հասկանան, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը: Աշակերտների մեջ գործնական կարողության առկայությունը նրանց իսկ ուսումնառության որակի հիմնական և գլխավոր ցուցանիշն է լինելու ողջ կյանքում: Հենց այս տեսանկյունից է, որ արժևորվում է գործնական աշխատանքի դերը ոչ միայն որպես տեսական նյութի ամրապնդման միջոցի, այլև որպես սովորածը գործնականում կիրառելու հնարավորության:

Աշակերտների գործնական աշխատանքը մայրենիից մի ոլորտ է, որտեղ շաղկապվում են գիտելիքն ու կարողությունը, տեսությունն ու պրակտիկան:

Եկա այն եզրակացության, որ գործնական աշխատանքների միջոցով զարգանում են աշակերտների ուշադրությունը, դիտողականությունը, տարածական պատկերացումները, ձևավորվում է ստեղծագործական և կառուցողական մտածողությունը: Աշակերտները կարողանում են կարդալ գծագրերը, լուծել իրենց առջև ծառացած խնդիրները, ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի դրսևորումը, միմյանց օգնելու, սատարելու ունակությունները:

Գործնական աշխատանքները նպաստում են գիտելիքի յուրացումը խորացնելուն , խթանում են երեխայի՝ արդեն վաղ հասակում գիտելիքներին ինքնուրույն, ստեղծագործաբար հաղորդակից դարձնելու հնարավորությունները: Իսկ այդ հնարավորությունները հետագայում կօգնեն նրան դառնալ կրթված մարդ:

Առաջարկություններ.

Ուսուցման փորձը կարելի է ներկայացնել մեթոդմիավորման նիստում, դիտարկել, քննարկել, կիրառել լավագույն փորձը:

Օգտագործված գրականություն

1.Կ.Թորոսյան ,Կ. Չիբուխչյան , Գործնական աշխատանքներ մայրենիից:
«Զանգակ» հրատարակչություն, 2017 թ.:

2. «Նախաշավիղ»գիտամեթոդական հանդես 3.2012թ.:

3. Նյութեր համացանցից:

4. «Նախաշավիղ», Ն 1,2014, «Ուսուցման մեթոդիկա», 3-9էջ:

5. «Նախաշավիղ», N4, 2010, «Գործնական աշխատանքները 4-րդ դասարանում»:

6. http://www.encyclopedia.am/pages.php?hId=1379

7 https://www.youtube.com/watch?v=_wdrUJWLkGk